ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքը հաստատել է իր 2020 թվականի բյուջեն հետևյալ համամասնությամբ:

1. Եկամուտների գծով 16292.0 հազար դրամ.
2. Ծախսերի գծով 16957.4 հազար դրամ.
3. Բյուջեի դեֆիցիտ 665.4 հազար դրամ.

Տալվորիկ համայնքի համայնքապետարանը 2019 թվականի Հունվարի 1-ից մինչև Դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ աշխատանքները՝

2019 թվականի ընթացքում Տալվորիկ համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 39 որոշումներ և 3 կարգադրություն:Համայնքի ավագանին հրավիրել է 16 նիստեր: Համայնքապետարան մուտք է եղել 367 գրություն և առքվել է 217 գրություն:
Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի բնակիչների կողմից ստացվել է դիմումներ, որոնց ժամանակին տրվել է համապատասխան պատասխաններ: Թվով 173 քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ:
Կազմվել է 2019 թվականի աշխատանքային պլանը և համայնքի տարեկան բյուջեն: 2019 թվականի դեկտեմբերի 6-ին կայացել է համայնքային ծառայության առաջատար և գլխավոր մասնագետների ատեստացիան:
2019 թվականի ընթացքում համայնքում մշակվել է 424 հա ցանքային տարածություն :

1. 332 հա պտղատու այգի :
2. 286 հա խաղողի այգի:

Հավաքվել է բերք կատարված ցանքսերից՝

1.Հացահատիկային մշակաբույս – 46.8 հա-ից հավաքվել է 1421 ց բերք
2.Տեխնիկական մշակաբույսեր - 71.6 հավաքվել է 648 ց.
3.Բանջարաբոստանային մշակաբույս – 125.56 հա -ից հավաքվել է 17119.5ց
4.Բազմամյա խոտ –176.56 հա-ից հավաքվել է 24450ց
5.Պտուղ – 276 հա-ից հավաքվել է 11620.9 ց
6.Խաղող – 239 հա-ից հավաքվել է 24450 ց

Կատարվել է 31.5 հա աշնանացան ցորենի ցանքս:

1. Գյուղահարկի գծով տարեկան պլանը կատարավել է 105.7%-ով. պլանավորված 600,0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 634.1 հազ. դրամ գումար:
2.Հողի հարկի գծով պլանը կատարվել է 89.5 %-ով. 11070.0 հազ. դրամի փոխարեն հավաքագրվել է 9908.2 հազ. դրամ գումար:
3.Վարձակալական հողի գծով վճարումները կազմել են 357.1 հազ.դրամ գումար, 500.0 հազ.դրամ գումարի փոխարեն, այսինքը տարեկան պլանը կատարվել է 71.4%-ով:
4.Այլ ոչ հարկային եկամուտների պլանը կատարվել է 63.7 %-ով 400.0 հազ.դրամ գումարի դիմաց հավաքագրվել է 254.6 հազ.դրամ:
5.2019 թվականին համայնքում համայնքի բյուջեից կատարվել է աղբահանման աշխատանքներ, որի համար տրամադրվել է 500,0 հազ.դրամ գումար:
6.Համայնքում նոր աղբավայրի կառուցման և խաղահրապարակի նախագծա-հաշվային աշխատանքների համար հատկացվել է 130,0 հազ. դրամ:Նոր աղբավայրի կառուցման աշխատանքների համար ֆոնդային բյուջեից հատկացվել է 990,0 հազ.դրամ :

7.Համայնքում նոր աղբավայրի կառուցման,համայնքի բնակիչների երեխաների համար խաղահրապարակի կառուցման աշխատանքների համար , ֆոնդային բյուջեից հատկացվել 1500,0 հազ.դրամ գումար շինարարական ապրանքների ձեռք բերման նպատակով :
8.Համայնքում անասնաբուժական ծառայությունների մատուցման համար հատկացվել է 400,0 հազ.դրամ գումար՝ որպես անասնաբույժի աշխատավարձ:
9. Նոր տարվա միջոցառումների կազմակերպման համար համայնքի բնակիչների և երեխաների համար բյուջեից տրամադրվել է 250.0 հազ.դրամ:
10.Կադաստրային չափագրումների և քարտեզագրումների , նախագծա-հաշվային աշխատանքների համար բյուջեից հատկացվել է 230.0 հազ.դրամ:
Եկամտահարկի և էլեկտրաէներգիայի գծով պարտքեր չկան:
Ըստ 12.01.2020թ-ի դրությամբ ընթացիկ տարվա աշխատավարձերի պարտքեր չունենք:
2019 թվականի ընթացքում Տալվորիկի համայնքապետարանում մի քանի կառույցների կողմից կատարվել է ստուգումներ:
2019 թվականի մայիսին ստուգումներ անցկացվեց Հայաստանի Հանրապետության Վարչապետի վերահսկողական ծառայության խմբի կողմից:
Սեպտեմբերին Տալվորիկ համայնքի հողօգտագործող Մեսրոպ Հունանյանի բողոքի հիման վրա ստուգումներ կատարեցին Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 6-րդ վարչության կոռուպցիայի դեմ պայքարի խմբի կողմից, որից հետո նույն հողօգտագործողի բողոքի հիման վրա դեկտեմբերի 28-30 ստուգումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի բաժանմունքի քննչական բաժնի կողմից, որի հիման վրա հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն :

Համայնքի առաջնային խնդիրներից են .՝
1.Ոռոգման ջրի խնդիրը
2.Ներհամայնքային ճանապարհների խնդիրները
3.Տրանսպորտի բացակայությունը
4.Մանկապարտեզի բացակայությունը
Տալվորիկ համայնքի ավագանին մշտական կապի մեջ է համայնքապետարանի աշխատակազմի հետ:
Համայնքն ամենօրյա կապ է հաստատում մարզպետարանի, մարզային կառույցների, ՆԳ, դատական ու դատախազական մարմինների կառույցների հետ:

Տալվորիկ համայնքի ղեկավար՝ Կ.Սաղաթելյան

02-03.2020թ